№ 58 Ապրիլ 5 (17) 1880 Ապրիլ 5 (17) № 58

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի կամ տարեմեջ 6 բուբլի։ Առանձին համարները 5 կոպեկով։

Թերթիս մասին գրվում են միայն խմբագրատան մեջ։

Հայտարարագրերը դիմում են ուղղակի Типогр. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առավոտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տան օրերից)

Հայտարարություն ընդունվում է ամեն չեզուով։

Հայտարարությունների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն։ Երեխաների ինգիրը Եւրոպայում և Ռուսաստանում։ Նամակ Բաշ-Շորագեղից։ Նամակ Նոր-Նախիջեւանից։ Նամակ Ալեքսանդրից։ Նամակ Ախալցխայից։ Նամակ Խարբերդից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Արևելեան Բումելիա։ Դաշնակցութիւններ։—Թուրք լուրեր։—Աֆղանիս հնագիրներ։—Հայտարարութիւններ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

—

I

Պ. Մեշինիով «Дѣло» ամսագրի մեջ մի քանի հետաքրքիր դիտողութիւններ է տրել երեխաների դրութեան մասին մեծ քաղաքներում։

Հեղինակը համեմատում է քաղաքներում բնակվող երեխաների դրութիւնը գիւղական երեխաների դրութեան հետ և այն եզրակացութեան է հանում, որ քաղաքաքրթութիւնը զրկել է առաջինները այնպիսի տարրական բարօրութիւններից, ինչպէս են ազատ տարածութիւնը, մաքուր օդը և արևի լոյսը։ Քաղաքային փողոցները գեղեցկացնվում են փառաւոր արձաններով, մինչդեռ քաղաքային ոչ մի վարչութիւն չէ հոգում բնակիչներին մաքուր օդ հայցնել։

Պրոֆեսոր Վիրխովը ասում է, որ Նէապոլի կապույտ երկնքի տակ բանւորները բնակվում են «fondaci bassi» անուանված այնպիսի սարսափելի այրերի և գետնափորների մէջ, ուր չէ թափանցում ոչ լոյս, ոչ օդ և որտեղ փտած յարդի կոյտերի վրա քնում են միասին հայրերը, մայրերը, եղբայրները և քոյրերը, հասակաւորները և երեխաները։

Այդ գետնափորների մէջ ծնված և իրանց ամբողջ կեանքը նրանց մէջ անցկացրած երեխաների թիւը 2500-ից պակաս չէ։ Այն այրերի մէջ, որտեղ թոկեր չունող բանւորները աշխատում են, 6 տարեկան երեխաներն անգամ, օրեկան կէս ֆրանկ ստանալով, մեքենաների անիւներ են պտտում, մինչդեռ ուրիշ երկիրներում այդ աշխատանքը կատարում են շները և օրական 6 սու են ստանում։ Այդ ողորմելիները այնու ամենայնիւ զոնա հոտած բնակարան ունեն, իսկ Նոբանք, որոնք որոշ և ուրիշ մշտական աշխատանք չունեն, կատարեալ թափառական կեանք են վարում և երբեմն միայն, փող աշխատելուց յետոյ, արժանանում են գիշերային օթեւանին, քնելով գետնափորերից աւելի էլ հոտած locanda անուանված հիւրանոցներում։ Կան լոկանդներ, որոնք բնակեցրած են բացառապէս երկու զանազան հասակի երեխաներով։ Նրանց մեծ մասը ապրում է փողոցներում կեղտոտ փոսերում հաւաքելով, ագռաւութիւն անելով, իսկ աղջիկները, օրական ապրուստ ձեռք բերելու համար, ստիպված են իրանց ծնողներ։ Խաղական կառավարութիւնը բոլոր դասակարգի երեխաների համար պարտադիր տարրական ուսման օրէնքը ընդունեց և թէպէտ անցեալ տարի զանազան ուսումնարաններում սովորող երեխաների թիւը 1,640,000-ի էր հասնում, բայց այնու ամենայնիւ չը սովորող երեխաների թիւը հասնում էր 1,500,000-ի։ Ի հարկէ նէապոլը չէ կարելի օրինակի համարել քաղաքաքրթութեան կողմից։ Դեռ ընդամենը քսան տարի է անցել, ինչ այդ երկիրը ազատվել է ամենարարբարս, մարդակային ձգտումները բնաջինջ անող կառավարութիւնից։ Միւս կողմից այդ երկրի մէջ չը կան ոչ գործարաններ և ոչ արդիւնաբերական կենտրոններ։ Հիանալի կլիման, առատաձեռն բնութիւնը մեծ քանակութեամբ հաց, մրգեր, բանջարեղէններ է տալիս։ Վերջապէս այնտեղի հասարակական բարեգործութիւնը շատ ընդարձակ է, այնու ամենայնիւ. Նէապոլը կլասիկական ազատութեամբ, կրօնական և քաղաքական ֆանատիզմով խեղդված մի երկիր է։ Տիկին Ուլիսա-Մարիոյի հաշիւների համեմատ Նէապոլի Annunziata անուանված երեխաների ընդունարանը կէս միլիոն տարեկան եկամուտից, երեխաներին պահելու համար տարեկան միայն 12,000 ֆր. է ծախսում։ Annunziata-ի մէջ ընդունված երեխաներից տարեկան 80% մեռնում են։ Բնակարգ գինանոցների հաշիւների համեմատ, մինչդեռ Միացեալ-Նահանգներում արդիւնաբերութենից աշխատողը ստանում է 72%, զուտարարը 25%, իսկ պետութիւնը միայն 3%, Իտալիայում աշխատողը ստանում է միայն 17%, իսկ մնացածը զուտարարը և պետութիւնը իրանց մէջ են բաժանում։

D'Ossonville իր «L'enfance á Paris» վերնագրով գրքի մէջ նկարագրում է Փարիզի փողոցներում փաղաքներ հաւաքող երեխաների ողբալի կեանքը։ Այդ երեխաները քնում են գետնափոր խրճիթների մէջ ագրից հաւաքած փայտերի և կեղտոտ ագրի կոյտերի վրա։ Փարիզի պոլիցիան չէ հետաքրքրվում առողջապահական պայմաններով։ Ինքը պոլիցիական վարչութիւնը վատ է վարվում փողոցներում հաւաքած փոքրիկ թափառականների հետ։ Երեխաներին կարանարելու համար պատրաստված տեղը պոլիցիական վարչութեան մէջ աղքատների ամենավատ բնակարանից անգամ վատ է։ Լօնդոնի մէջ այդ տեղը աւելի լաւ է։ Այնտեղ երեխաների կաշու հիւանդութեան զարգացումը նրանով ընդհատվեցաւ, որ կառավարութիւնը մի օրէնք ընդունեց, որի հիման վրա կայանաւորված երեխային պէտք է ամենից առաջ ոտք ջրում լողացնել։

Ժամանակակից ֆիլանտրոպները փորձեցին երեխաների բանկերը զարձնել ուղղող հիմնարկութիւններ կամ ուսումնարաններ։ Բայց քանի որ այդ ուսումնարանները լաւանում էին, այնքան հասարակութեան մէջ հարց էր ծագում, թէ միթէ հրաւարար հսկողութիւն և ուսում տանելու համար, հարկաւոր է որ երեխաները անպատճառ առաջ զողութիւն անեն։ Այդպիսի դրութիւնից ազատում է միայն պարտադիր ուսումը։ Պարտադիր ուսման օրէնքի ընդունելը Լօնդոնի մէջ գեղեցիկ հետևանքներ ունեցաւ։ 1876 թիւն տարրական ուսում ստացողների թիւը 39,356 էր, իսկ 1879 թիւն 112,979։ Այնու ամենայնիւ 465,000 սովորող երեխաների հետ 150,000 երեխաները չը սովորողներ են։ Ամբողջ Անգլիայում 5 միլիոն երեխաներից 2 միլիոնը զրկված են անհոգութեանը, տգիտութեանը և ագռաւութեանը։

ՆԱՄԱԿ ԲԱՇ-ՇՈՐԱԳԵՂԼԻՑ

—

18 մարտի

Շորագեղի Նահանգը, որ առաջներն էր հայի կողմից երկրի առատութեան, անա այս բոպէիս ճնշվում է բնութեան պատժի տակ. գլխաւորապէս գիւղացիք, որոց մեծ մասը 3 ր. 40 կոպեկով փտած ալիւրը ուտելուց զլխի այժմ մնացել են ձեռքերը ծոցումը։ Այդ դեռ ևս բաւական չէ, նրանց ցաւը կրկնապատիկ է. Նոքա համարեա մոռացել են մտածելու իրանց ուտելու հացը, քանի որ Նրանց տաւարը, նրանց միակ ապրուստը այսօր չուտում է հասնել իր օրհասին։ Բաշ-Շորագեղը, որ նոյն Նահանգում գլխաւոր գիւղն էր համարվում թէ հարստութեամբ և թէ հոգի քանակութեամբ, անան ամբողջ 24 ժամ սոված տաւարին ցախերով է ուտացնում։ Բաշ-Շորագեղցին որ այսպէս է անում, ուրեմն ինչ պիտի անէր խեղճ գահարեցին, որանից դեռ ևս երկու տարի առաջ զրկված էր իր հոգագործութեան վաստակից։ Այս թշուառ ժողովուրդը (բացի 5 տանից) չունի ուտելու և ցանելու հաց, նրա տաւարին սպառնում է սովը։

Սրանից մի ամիս առաջ նա գնում էր իր տաւարի կերակուրը, յոյսը դնելով մարտի 5-ին, թէ գարուն կը մնի, բայց անան մարտն էլ է լրանում ձիւնի սպիտակ ծածկոյթի տակ։ Ամեն տեղ մանաւանդ տաւարի համար չբաւարարիւն է. ամեն տեղից մերժում են նրան, ասելով. «քաղաքը դեղ ունենայ իր զլխին կը քաշ»։ Նա քիչոյը (8 տաւարի մի վանի կերակուր է) դնելով 1 ր. 20 կոպեկով անվճարելի պարտքի տակ մնացած՝ տաւարն պահել, այժմ ակամայից կամենում է զրկվել նրանից։ Սիրելի ընթերցող, երևակայիր մի գետնափոր խրճիթ, բաց արա նրա դուռը, և անան կը տեսնես մի տաւարանոց 4—5 տաւար մուրկից պինդ կապած՝ կրծոտանում են առանները, և խոկոն աչքերը զարնում են դուռը բացանողի վերա, ցաւալի զոռում զոռալով կարես ողորմելիին են խնդրում քեզանից։ Ագիողորմ տնտարանը անտանելի է գլուցցու համար, նա ակամայ դուրս է գնում և պեղացած նայելով երկնքի երեսին, յուսահատված ազազակում է. «Աստուած, մենք ինչ է ենք արել քեզ». նա յետ է դառնում, նա չունի հանգստութիւն, բայց ուր պէտք է գնալ.

Յովհաննէս Յէր-Բարսեղեանց

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

Փետրվարի 15-ին

Փիլիպպոս Վարդանեանը ասում է թէ՝ երկու տարի իմ գրչէն հալածանք կելով, վերջապէս հանրութիւնը հատած, ստիպված է պատասխանելու, և նորա՝ այս երկու տարուայ մէջ կնատած պատասխանն է՝ մի սինեակ յիշոյց, մի սինեակ բամբասանք և երկու սինեակ անձնադատութիւն։ Եւ այսպիսի գրուածքը նա անուանում է պատասխան։

Այդ երկու տարին ոչ թէ ես փ. Վարդանեանին հալածում էի, այլ աշխատում էի զուրս հանել լոյս աշխարհ նրա արածները։ Ես նրա հետ ոչինչ անձնական գործ չունիմ թէ նա չիտակ մարդ էր՝ թէ՝ ոչ։ Կամենակի հարցեր մտցրեց մեր արոչ վէճի մէջ։ Ես նրան ասում էի. «Դու մանկավարժ (педагогъ) չես, մեզ այդ պէտքոց, մարդոց մի մարդերուս»։ Նա պատասխան էր խօսքիս ճիշդ պատասխանը տալու, նա պատասխան էր հատատելու թէ ինչն մանկավարժ է, որ քաղաքիս տղայոց այս և այն օգուտները է տալիս, իսկ իմ անձը և գործունէութիւնը պիտի մի կողմ թողնէր։ Բայց որովհետև նա այդ բանը չարեց և, կարգացողին մոլորեցնելու համար, խնդրվեն հեռացաւ և պատասխանի տեղ՝ լիշոցներ տուեց ինձ և զրպարտութիւններ արեց վրաս, ուրեմն թող չը բարկանայ, որ այժմ ես ևս գրչիս մի փոքր ազատութիւն տամ և նրա անձը մի փոքր չոչափեմ։

Ինձ լիշոցներ տալով փ. Վարդանեանի գիտութիւնը չի ասեղանալ և ոչ մանկավարժի հարկաւոր յատկութիւններ կը մտնի նրա մէջ։ Դիցուք թէ նա ինձ թշնամի է ճանաչում և ասածներս չէ հաւատում։ Ինձ նրա ծանօթները ասացին, որ նա եօթը տարին այնպէս չանցկացրեց, ինչպէս որ պէտք էր մանկավարժութիւն իմաստասիրող երիտասարդին։ Նա կեանքի ամենաթանկ ժամանակները թափառեցաւ աշխարքէ աշխարք ու քաղաքէ քաղաք և անտես արեց մանկավարժութեան կարևոր օրէնքների և կանոնների իմաստասիրելը։ Ո՞ւր են նրա պարապմունքի ապացոյցները, ուր են նրա վկայագիրները, ուր է նրա գիտութիւնը. այս գրեթէ երեք տարուայ մէջ որ ժողովրդումը նա մի մանկավարժական խօսակցութիւն ունեցաւ մարդոց հետ, որ ընտանեկան ակմբումը նա մի նոր լոյս ծաղեցրուց՝ ըստ նրա մանկագիտութեան, որ լրագրում կամ օրագրում նա մի տող բան գրեց և կամ թէ նոր և օգտաւէտ բան մտցրեց իր ասանդած վարժարանի մէջ՝ բացի հին ժամանակուայ սովորութիւններէ աշակերտներին ծեծել տալ։ «Էրեկրը խարի մէջից էլ կերեմ», ասում է ասուի առածը. նրա վրայից, հաւատաք ինձ, մանկավարժի հոտ էլ չի գալիս։ Դրան կարելի է անուանել краснобай, балагуръ, bon-vivant, танцоръ, բայց ոչ երբէք педагогъ։ Այս բանը հարցրէք նոցա, որոնց փ. Վարդանեանը իմ գէմ է գրգռում, որոնց նա իմ թշնամիներն է համարում, և նոքա ճշմարիտը կասեն, եթէ մէջերը խղճմտանքի ամենափոքրիկ մաս մնացել է։

Փ. Վարդանեանը ասում է թէ՝ երկու անգամ մեզ ես «ասացց» աշակերտներին։ Բայց ես ասում եմ, որ սռաւել քան թէ հինգ անգամ նա քաղաքս դղրդեցրեց աշակերտներ ծեծելու լուրով։ Մի անգամ նա մի աշակերտի ականջը այնպէս սաստիկ քաշեց որ արիւնը աշակերտի բոլոր երեք թաթախեց և զասարանի սուխտակամածը ճապաղիկ էր դարձած, եթէ նա վրայ չը հասնէի և բանը չը հանդարտեցնէի՝ նա անչուշտ դատաստանի պիտի ենթարկուէր։ Ցոյն մանանուն էր Զաքրիան, Միւս երեխայի (8 ամեայ) այնպէս սաստիկ ծեծեց, որ ողորմելին սաստիկ հիւանդացաւ....վրան զանգատ տուին, և եթէ Խ. Զ. քահանան միջամուխ և բարեխօս չը լինէր, փ. Վարդանեանին անչուշտ կը տուժէին։ Այս բանը ինձ պատմեց կարապետ Սիկիտարեանը՝ պ. Զաքարեանի գրասենեակումը։ Երբորդ աշակերտին նոյնպէս սաստիկ ծեծեց, այնպէս որ 8 ամեայ երեխան հիւանդացաւ։ Այս որը տղի մանանունն է Գեւորգով, և այս անգամը ինձ պատմեց արդդ քաղաքացի պ. Պասիֆարայեանը։ Չորրորդ անգամ մի աշակերտի այնպէս սաստիկ ծեծեց բունցի տալով (եւմբուխով ու թէքմէյով), որ աշակերտը նրա առջեւ ուշաթափ եղաւ, և եթէ միւս աշակերտները չտապով սառ ջուր չը ըրէին և թաղցած երեխայի երեսին չի սրսկէին՝ ով գիտէ ինչ վատ հետևանք պիտի գուրս գար։ Այս որդի մանանունն է Խաչիկեան Մնացանները ոչ միտս է, ոչ էլ հետաքրքրութիւն արել եմ իմանալու։ Հաւատացնում եմ, որ այս ամենը ինձ յատկապէս եկել են և դանդատել են, որ ես կամ վերնագրին իմացնեմ ու նրա պարապմունքիւնը ենթարկեմ վարդանեանի դէմ, կամ լրագրի մէջ հրատարակեմ։

Ուրեմն, փ. Վարդանեանը ոչ մի, այլ չատ անգամ, ոչ սաստել, այլ չարաչար գանգոնել է աշակերտներին։ Հարցնում եմ, ով է սուտ խօսում. եթէ ես այս բանը չի պարզէի նա իսմ իրան հրնչանակ պիտի ասեցնէր «Աշակերտ միանա կարգացողների առջև, նոյն և նման՝ եթէ ես մի Ջանամարս չը մնեի ֆէլան թուէպրոմեանի մէջ՝ նա խսմ այս օրուայ օրս պարդերես և պատուելի գիրէ՛լիոր պիտի լինէր մեր քաղաքային ժողովարանի (լրատի) մէջ։ Ի հարկէ, Վարդանեանը լաւ մարդ չէ կարող ասել նորան, ով իր ամեն արածը լոյս աշխարք է հանում։ Բայց Թող դեռ ես սպասէ. ինչեր պիտի պատմում նրա վրա։ Ես խսմ վաղուց ասել եմ, որ Վարդանեանը իմ գրչի համար ամենահարուստ նիւթ է։

Բայց ես ծեծելու վրա մեծ ուշադրութիւն չէի դարձնիլ (թէկ աշակերտ ծեծելը, մեր օրերումը,